

# Շոգովուրդ

136  
(2616)

28 սեպտեմբերի չորեքշաբթի 2022  
տպագրության ժԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է ՄԱՍ 100



ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը երբ դեռ Նոր էր դարձել գործադիրի ղեկավար, մամուլի ատուլիսներ էր անցկացնում եւ 100 փաստ ներկայացնում կառավարության աշխատանքի մասին: «Ժողովուրդ» օրաթերթն այսօր ներկայացնում է 100-րդ ապացույցը, որ նա իր տարբեր հայտարարություններով խաբել է ՀՀ քաղաքացիներին: Դրանք եղել են թե՛ պատերազմին, թե՛ սոցիալ-տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերի ժամանակ: Օրինակ՝ 2021 թվականի մայիսի 12-ին ադրբեջանական զորքերն առաջին անգամ էին մտել Հայաստանի տուվերեն տարածք եւ հաստատվել Սեւ լճի տարածքում, նաեւ առաջ եկել Գեղարքունիքի մարզում, եւ մայիսի 28-ին Նիկոլ Փաշինյանը ԶՊ ակտիվի հետ հանդիպման ժամանակ նշել էր. «Մենք ասենք, որ հա նայենք ուսումնասիրենք, ասենք՝ մենք Սեւ լճի էր 30 տոկոսի համար պատերազմ ենք սկսում. ոչ, չի լինում նման բան, մենք չենք գնալու իրավիճակի սրման: Մենք գնալու ենք իրավիճակի խաղաղ հանգուցալուծման»: Ստացվում է՝ Փաշինյանին ոչ միայն չհաջողվեց գնալ իրավիճակի խաղաղ հանգուցալուծման, այլև Նոր ռազմական գործողություններ սկսվեցին սահմանին: Հիմա ազերիներին հաջողվել է Նոր տարածքներ գրավել, եւ Նիկոլ Փաշինյանը պայքար մղելու, անգամ կամավորագրվելու կոչ է անում: Ստացվում է՝ Սեւ լճի 30 տոկոսի համար նա չէր ցանկանում պայքարել, սակայն այժմ ավելի լայն տարածքում պայքարի կոչ է անում:

Մեզ մնում է արձանագրել, որ Փաշինյանը հերթական անգամ խաբել է մանկապուկացրել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին՝ ասելով, թե Սեւ լճի 30%-ի համար պայքարը անհնաստ է: Իրականում մեր երկրի ամեն սանտիմետրի համար հարկավոր էր կռիվ տալ:

Նախկին ՀՀ-ական, այժմ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Շիրակ Թորոսյանի կինը՝ Սուսաննա Աղաբաբյանը, տուրիստական ընկերություն ունի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Աղաբաբյանին պատկանող «Էդեն տուր» ընկերությունը թե՛ մի շարք ուղղություններով է աշխատում, բայց հիմնականում սոցիալաթերթերի վրա է կենտրոնացած: Մեզ հետ զրույցում պատգամավոր Թորոսյանը հաստատեց կնոջ բիզնեսին առնչվող լուրն ու փոխանցեց, որ ընկերությունը, այո, նաեւ սոցիալաթերթերի շահառուներին է սպասարկում: «Լուրեր ունենք, թե Ձեր կնոջ ընկերությունը, շահառուների ու հյուրանոցների հետ ներքին պայմանավորվածությամբ, կոնկրետ «ատկատով» է զբաղված», - դիմեցինք պատգամավորին: Թորոսյանն իհարկե հերքեց այդ լուրն ու երկար բացատրեց, թե ինչպես է տեղի ունենում շահառու-տուրիստական ընկերություն համագործակցությունը, բայց դե բոլորիս շրջապատում էլ մանկավարժներ կամ այլ շահառուներ կան, ու բոլորս էլ լավ գիտենք, թե ինչպես են մարդիկ կանխիկացնում սոցիալաթերթերի իրենց գումարները, ում ինչքան «փայ» տալով:



Վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 16-ին ԱԺ ամբիոնից հայտարարում էր, թե ռազմական դրության անհրաժեշտություն չի տեսնում, սակայն առաջնագիծ մեկնել ցանկացողներին կոչ էր անում կամավոր դիմել զինկոմիսարիատներ: «Մենք նաեւ բազմաթիվ քաղաքացիներից առաջարկներ ենք ստանում, նաեւ կան քաղաքացիներ, ովքեր ասում են, որ ռազմական դրության էինք սպասում, որպեսզի մասնակցենք մեր երկրի ինքնիշխանության եւ տարածքային պաշտպանությանը: Անվտանգության խորհրդի նիստում դա էլ ենք քննարկել եւ եկել ենք այն եզրակացության, որ եթե կան մարդիկ... հաստատ կան մարդիկ, ովքեր ուզում են ներգրավված լինել այս փուլում, նրանք կարող են սովորական ընթացակարգով, կամավորության հիմքով դիմել զինվորական կոմիսարիատներ, եւ այդ խնդիրը կլուծվի», - ասել էր Փաշինյանը: Փաշինյանի խոսքերի եւ իրականության մեջ հերթական անգամ մեծ տարբերություն կա: «Ժողովուրդ» օրաթերթը հարց էր ուղղել ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապինյանին. «Նիկոլ Փաշինյանն ամբիոնից հայտարարում է՝ եթե չեք ուզում հանձնել հողերը, կարող եք գնալ եւ պաշտպանել: Այն մարդիկ, որոնք դիմել են մինչեւ այսօր, ինչո՞ւ նրանց չեք թույլատրում գնալ սահման»: Ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը նշել է, թե զորահավաքը կազմակերպվում է իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու դեպքում», - ասվում է ՊՆ-ի պատասխանում: Այսինքն՝ ստացվում է, որ իրականում մարդիկ չեն կարող գնալ սահման, պաշտպանել մեր երկիրը, քանի որ ռազմական դրություն, հետեւաբար նաեւ զորահավաք չկա: Նիկոլ Փաշինյանը ուղղակի պոպուլիստական հայտարարություն էր անում, թե՛ գնացե՛ք պաշտպանե՛ք երկիրը, ո՞ւմ եք սպասում:



ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցից հետո հանրային տիրույթում սկսեց քննարկվել 1994 թվականին կնքված եռակողմ հրադադարի համաձայնագիրը: Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը զրույցել է 1992-1996թթ. Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար, Լեռնային Ղարաբաղի խնդրով ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովի հետ՝ փորձելով հասկանալ՝ ինչպես ստացվեց, որ այդ ժամանակ Ադրբեջանին հաջողվեց ջստորագրել մոսկովյան համաձայնագրի ամփոփիչ արձանագրությունը: «1994 թվականի մայիսի 16-17-ին Մոսկվայում տեղի է ունենում Սարգսյանի, Մամեդովի եւ Բաբայանի հանդիպումը, որի ընթացքում քննարկվում է «1994թ. փետրվարի 18-ի արձանագրության իրականացման կարգի արձանագրությունը» փաստաթուղթը: Համաձայնագիր է ստորագրվում կրակը դադարեցնել մայիսի 17-ի ուղիղ կեսգիշերից, ինչպես նաեւ պատրաստվում է փաստաթուղթ, որով նախատեսվում էր դարաբաղյան եւ ադրբեջանական զորքերի տարանջատում, կողմերի միջեւ բուֆերային գոտու ստեղծում, խաղաղարար ուժերի տեղակայում: Փաստաթուղթը ստորագրում են Գրաչովը, Սարգսյանը եւ Բաբայանը: Մամեդովը փաստաթուղթը չի ստորագրում. նրան շտապ կանչում են Բաքու: Ադրբեջանը հրաժարվում է ստորագրել մոսկովյան համաձայնագրի ամփոփիչ արձանագրությունը, սակայն հրադադարը դառնում է իրականություն: «Ադրբեջանը անմիջապես պարզաբանում է՝ ադրբեջանական կողմը մտադիր է հակամարտությունը կարգավորելու շուրջ բանակցություններ վարել միայն ԵԱՀԿ-ի շրջանակներում, իսկ հակամարտության գոտում ռուսաստանյան խաղաղարարների տեղաբաշխման մասին խոսք չի կարող լինել», - հիշում է Կազիմիրովը: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր դիմել է նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ ստանալու նույն հարցի պատասխանը: ➔ էջ 2



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՐԲԵՋԱՆՆ ԷՐ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՀՐԱԴԱԴԱՐ

ArmLur.am-ի հարցազրույցը 1992-1996թթ. Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար, Լեռնային Ղարաբաղի խնդրով ՌԳ նախագահի լիազոր ներկայացուցիչ Կազիմիր Կազիմիրովի հետ է:

-Պարոն Կազիմիրով, ի՞նչ տեղի ունեցավ 1994 թվականին, որ Ադրբեջանը ստորագրեց հրադադարի համաձայնագիր: Ադրբեջանը ստորագրեց ոչ ավարտուն փաստաթուղթ, իսկ այժմ Հայաստանին ստիպում են կապիտուլյացիայի մասին փաստաթուղթ ստորագրել:

-Այդ ժամանակ Ադրբեջանը, Հայաստանը եւ անգամ Ղարաբաղը ստորագրել էին կրակի եւ ռազմական գործողությունների դադարեցման մասին համաձայնագիր: Դա եղավ 1994 թվականի մայիսի 12-ին: Այդ ժամանակ Ադրբեջանը կողմ էր նման համաձայնագրի ստորագրմանը: Ես չեմ կարող ասել, թե ինչ է կատարվում հիմա, քանի որ երկար տարիներ է՝ գտնվում եմ թոշակում, եւ շատ բաների մասին տեղյակ չեմ: Ինձ հիմա հայտնի չէ, թե ինչ են առաջարկում ստորագրել Հայաստանին:

-Կհիշե՞ք՝ ինչ իրավիճակ էր այն ժամանակ, ինչպես ստացվեց, որ կողմերը կարողացան եռակողմ համաձայնագրի հասնել:

-Այն ժամանակ Ադրբեջանը մեկ տարուց ավելի ծախողումներ էր կրում, սակայն փորձում էր արդյունքի հասնել: Վերջինը, որ եղավ այն ժամանակ, հարձակումն էր ձմռանը հյուսիսի կողմից: Նրանք փորձեցին այնտեղ ճեղքել հայերի պաշտպանությունը, սակայն դա չստացվեց, եւ Ադրբեջանը 1993 թվականի դեկտեմբերից հետո ավելի հակված էր ստորագրել փաստաթուղթը: Անգամ Բիշքեքում հանդիպում եղավ 1994 թվականի մայիսի սկզբին, Ադրբեջանը հայերից շատ էր ցանկանում ստորագրել պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագիր, սակայն ադրբեջանական պատվիրակության ղեկավարը չէր կարող անձամբ ստորագրել, քանի որ Յեյդար Ալիևը նրան թույլ չէր տվել ստորագրել առանց նրա հետ համաձայնության, իսկ անձամբ Յեյդար Ալիևն այդ ժամանակ մեկնել էր Բոյոսել: Ադրբեջանը մի կողմից ցանկանում էր արագ հասնել հրա-



դադարի Բիշքեքում, սակայն արգելք ուներ Ալիևի կողմից, եւ անձամբ այդ մասին ասել է: Ահա այն, ինչ ես հիշում եմ:

-Իսկ բանակցությունների ընթացքում համաձայնագրի կետերն Ադրբեջանի կողմից շա՛տ էին փոխվել:

-Այն ժամանակ Ադրբեջանը ցանկանում էր ստորագրել՝ չնայած 7 շրջանների: Սկզբում Ալիևը հրահանգ տվեց, որ ստորագրվի բիշքեքյան համաձայնագիրը, եղան մի քանի փոփոխություններ, սակայն ոչ առանցքային: Սկզբում ստորագրվեց դա, ապա պաշտպանության նախարարին հրահանգ եղավ ստորագրել կրակի դադարեցման մասին համաձայնագիրը: Մամեդովը ստորագրեց, մյուս օրը ստորագրեց Սերժ Սարգսյանը Հայաստանի կողմից, եւ Սամվել Բաբայանը՝ Ղարաբաղի կողմից: Այդ փաստաթուղթը մայիսի 12-ին է ստորագրվել: Մեր ջանքերը որտե՛լ արդյունք չէին տա, եթե Ալիևի դրությունը չլիներ անելանելի: Ալիևը կանգնած էր ոչ միայն նոր տարածքներ, այլեւ իշխանությունը կորցնելու վտանգի

առաջ: Մայիսի 12-ին հրադադարն ուժի մեջ է մտնում: Մայիսի 16-17-ին Մոսկվայում տեղի է ունենում Սարգսյանի, Մամեդովի եւ Բաբայանի հանդիպումը, որի ընթացքում քննարկվում է «1994թ. փետրվարի 18-ի արձանագրության իրականացման կարգի արձանագրությունը» փաստաթուղթը: Համաձայնագիր է ստորագրվում կրակը դադարեցնել մայիսի 17-ի ուղիղ կեցիցից, ինչպես նաեւ պատրաստվում է փաստաթուղթ, որով նախատեսվում էր դարաբաղյան եւ ադրբեջանական զորքերի տարանջատում, կողմերի միջեւ բուֆերային գոտու ստեղծում, խաղաղարար ուժերի տեղակայում: Փաստաթուղթը ստորագրում են Գրաչովը, Սարգսյանը եւ Բաբայանը: Մամեդովը փաստաթուղթը չի ստորագրում. նրան շտապ կանչում են Բաքու: Ադրբեջանը հրաժարվում է ստորագրել մոսկովյան համաձայնագրի ամփոփիչ արձանագրությունը, սակայն հրադադարը դառնում է իրականություն: **Ջրույցեց ՆԱԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ**

ԳՈՐԾՈՒԴՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԵՆ

Ազգային ժողովի իշխանական պատգամավորները հերթական գործուղումների են գնացել ու պատրաստվում են գնալ: ArmLur.am-ը տեղեկացավ՝ սեպտեմբերի 21-24-ը Սանկտ Պետերբուրգ (Ռուսաստանի Դաշնություն) է գործուղվել ԶՊ-ական պատգամավոր Վադարշակ Հակոբյանը: Հակոբյանից հետո Պետերբուրգ է գործուղվել ու արդեն վերադարձել նաեւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ելենա Կիրակոսյանը: ԶՊ-ական Ալեքսեյ Սանդիկովը ՌԴ հյուսիսային մայրաքաղաք Կլեմկի հոկտեմբերի 5-ին:

Սեպտեմբերի 26-29-ն էլ ԶՊ-ականների մեկ այլ խումբ Վարշավա (Լեհաստանի Հանրապետություն) է մեկնել: Մեկնողների թվում են իշխանական պատգամավորներ Արուսյակ Զուլիալյանը, Արման Եղոյանը, Ծովինար Վարդանյանը, Սարգիս Խանդանյանը, Հասմիկ Հակոբյանը: Պատգամավորների հետ Լեհաստան կգնա նաեւ Աժ աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջխորհրդարանական կապերի եւ եվրախնամության բաժնի գլխավոր մասնագետ Հովհաննես Մաքսակաջյանը: Նշենք, որ վերոնշյալ բոլոր գործուղումների գիշերակացը ապահովվել է հրավիրող կողմը, մյուս բոլոր ծախսերը՝ խորհրդարանը:

ՆՈՐ ԴԱՏԱՐԱՆ ԿԱՏԵՂԾՎԻ

Վարչապետի աշխատակազմն առաջարկում է ստեղծել Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան: ArmLur.am-ը նախագծի հիմնավորումից տեղեկացավ, որ դատարանն իրականացնելու է հակակոռուպցիոն քաղաքացիական եւ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի վերաքննության կարգով վերանայումը: Դատարանը կազմված է լինելու թվով առնվազն 12 դատավորներից, որոնցից առնվազն 6-ը զբաղվելու են կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով, առնվազն 6-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների քննությանը: Այսինքն՝ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով կայացված ակտերի վերանայման գործերը բաշխվելու են միայն կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացմամբ, իսկ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված ակտերի վերանայման գործերը՝ միայն հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության մասնագիտացմամբ դատավորների միջեւ: Այսպիսով, նախագծի ընդունման արդյունքում վերաքննիչ քրեական եւ վերաքննիչ քաղաքացիական դատարանները դադարելու են քննել համապատասխանաբար կոռուպցիոն հանցագործությունների եւ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը: Նախագծով առաջարկվում է նաեւ վերաքննիչ դատարանում առաջնադաս մեթոդական հատվածների թեկնածուների ցուցակը ավելացնել հակակոռուպցիոն բաժնով՝ նախատեսելով, որ հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնում ներառվելու են կոռուպցիոն հանցագործությունների քննության եւ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինները:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐ

«Խորհրդարանում հանդիպել եմ «ՀՀ դահեսագործի զինծառայողների նախաձեռնության» հեղինակ Էդգար Հովհաննիսյանի հետ, որը բազմիցս բարձրաձայնել է ՀՀ զինծառայողներին եւ զինծառայողներին հավասարեցված անձանց իրավունքների, մասնավորապես՝ վերջիններիս արձակուրդային օրերի հաճախման կարգի ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ», - հայցնել է Աժ մարզու իրավունքների դաճադանության եւ հանրային հարցերի մեջական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թազուհի Թովմասյանը:



«Էդգար Հովհաննիսյանի հետ քննարկեցինք ՀՀ զինծառայողներին եւ զինծառայողներին հավասարեցված անձանց իրավունքների խախտումները եւ դրանց լուծում տալու նպատակով աշխատանքային քննարկում կազմակերպելու վերաբերյալ մի շարք կարգեր, ուստի առաջիկայում սպասվում է աշխատանքային քննարկում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Ջինծառայողների իրավունքներին վերաբերող հարցերը մշտապես եղել են իմ ուշադրության ներքո, բազմիցս հանդես եմ եկել օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններով, որոնք երբեմն հավանության չեն արժանացել

խորհրդարանական մեծամասնության կողմից, սակայն այդ փաստն ինձ երբեք էլ հետ չի պահել լինել մեր զինվորի կողքին ու լինել հետեւողական նրանց վերաբերող ցանկացած հարցում»:

ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅԱՄԲ Է ՀԱՆԴԵՍ ԵԿԵԼ

ՆԵՄՆԱԿՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՉԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ

«Դատական համակարգում կենսա- ները գնալով քաղցրանում են: Ինչպես հայտնի է, սեպտեմբերի 26-ին Հայաս- տանի Հանրապետության արդարա- դատության նախարար Կարեն Անդրե- ասյանը եւ Երանուհի Թումանյանը ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կող- մից առաջադրվել են որպես Բարձրա- գույն դատական խորհրդի անդամի թեկնածուներ: «Ժողովուրդ» օրաթեր- թին հասած տեղեկությունների համա- ձայն՝ քաղաքական իշխանություն- ներն ամեն գնով ցանկանում են Կա- րեն Անդրեասյանին նշանակել ԲԴԽ նախագահ, սակայն ՔՊ խմբակցու- թյունում Կարեն Անդրեասյանին ԲԴԽ նախագահ նշանակելը այդքան էլ չեն ընդունել:

Մեզ հասած տեղեկությունների հա- մաձայն՝ խմբակցությունում կարծիք- ներ են հնչել, որ նա նախկին իշխանու- թյանը սպասարկողներից մեկն է եղել, եւ թե ինչպես կարելի է նրան նման պատասխանատու պաշտոնի տանել: Այս իրավիճակին զուգահեռ դատա- կան համակարգում կարծիքներ են հն- չել, որ Անդրեասյանի մուտքը դատա- կան համակարգ հղի է լինելու լուրջ վտանգներով: Դատական համակար- գում հիշել են Կարեն Անդրեասյանի խոսքերը դատավորների հասցեին, մասնավորապես՝ 2019 թվականի մայի- սի 23-ին Հանրային հեռուստաընկերու- թյան եթերից հայտնել էր, որ Հայաս- տանում, 50-60 դատավորից բացի, մնացածները սպասարկում են մաֆի- այի շահերը: «Սահմանադրությունն այդ դատավորներին պետք է վաղուց ուղարկած լիներ կալանավայր»:

Նա Պետրոս Դազարյանին սեպտեմ- բերի 2-ին տված հարցազրույցում հն- չեցրել էր հետեւյալ արտահայտու- թյունը. «Իմ ձեռքը լինելը՝ ընդամենը կես ժամում վերին գն արել-վերջացրել էի, բայց, ցավոք սրտի, էս երկրում կա օրենք»:

Այսինքն՝ դատական համակարգում 50-60 դատավորներ միայն կարող են հանգիստ շունչ քաշել, մյուսների կյանքը դժոխք կդառնա՝ «օրենքով»: Իսկ մինչ այդ՝ դեռ հեռավոր 2013 թվա- կանին, Հայաստանի Հանրապետու- թյան մարդու իրավունքների նախկին պաշտպան Կարեն Անդրեասյանը ար- տահերթ զեկույց հրապարակեց՝ ներ- կայացնելով դատական համակարգում պտտվող կաշառքի սակագները: Ըստ օմբուդսմենի զեկույցի՝ Առաջին ատյա- նի դատարաններում 500-10.000 ԱՄՆ դոլարով են վճիռ կայացնում, Վերաքն- նիչ դատարաններում՝ 2.000-15.000 ԱՄՆ դոլարով, իսկ բարձրագույն ատ- յանում՝ Վճռաբեկ դատարանում՝ 10.000-50.000 ԱՄՆ դոլարով:

Այս աղմկալի հայտարարությունից հետո դատական համակարգը կոնկ- րետ փաստեր էր ուզում, սակայն մինչ օրս մնաց անպատասխան այդ պա- հանջը: Սա նշանակում է, որ անպա- տասխան հարցերի հնչեցմամբ էլ գու- ցե ապագայում շատ դատավորների «գլուխներ թռնեն», բայց դա ամենեւին չի նշանակում արդարությունը կվերա- կանգնվի, կամ կլինի օրենքի առաջ հավասար վերաբերմունք:

ԱՄՆ Կոնգրեսի հայկական հարցերով խմբի համանախագահ Ջեֆ Սփիերը հանդես է եկել արդեթանական դա- ստադրական հանցագործությունները ինչդեռ Հայաստանում, այնուհետ էլ Ար- ցախում դասադարձ օրենսդրական նախաձեռնությամբ՝ կոչ անելով կի- րառել դասժամիչոցներ եւ դիմել մի- ջազգային սրբուհավանդներ՝ համա- դասախան հեռախոսություններ անց- կացնելու համար:

Սփիերը նման նախաձեռնությամբ է հանդես գալիս ԱՄՆ Կոնգրեսի Ներկա- յացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի գլխավորած կոնգրեսական պատվիրակության Հայաստան կատա- րած այցից մեկ շաբաթ անց: Ջեֆ Սփի- երը եւս պատվիրակության կազմում էր: Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների տան խոսնակ Նենսի Փելոսիի գրասենյակը տարածել էր հարդրագրություն, որի համաձայն՝ Երեւան կոնգրեսականների այցը ծրագրվել է նախքան հայ - արդե- ջանական վերջին ռազմական ընդհա- րումը:

Այցի ավարտից հետո հրապարակված այդ փաստաթղթում ասվում է, որ «Հա- յաստանը կարելու ճակատ է ժողովրդա- վարության եւ ավտոկրատիայի միջեւ պայքարում»:

«Երեւանում մենք փոխանցել ենք Հա- յաստանի ժողովրդավարությանը եւ անվ- տանգությունը սատարելու հզոր ուղերձ, հատկապես՝ Հայաստանի դեմ Արդեթա- նի հարձակումից հետո: Մեր այցը նախա- տեսված էր սեպտեմբերի 12-ի ռազմա- կան գործողություններից առաջ», - աս- վում է Փելոսիի գրասենյակի տարածած գրավոր հարդրագրությունում:

Պատերազմական հանցագործություն- ների համար պատժամիջոցներ կիրառե- լուց բացի, բանաձեւը կոչ է անում հե- տաքննել Արդեթանի կողմից հայ ռազ- մագերիների անօրինական բանտարկու- թյան փաստը, դատապարտում է հայկա- կան եկեղեցիների եւ պատմական հուշ- արձանների ոչնչացումը եւ համերաշխու- թյուն հայտնում Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների տարածքային ամբողջականությանը:

Հիշեցնենք, որ արդեթանցիներն ավե- րել են Շուշիի Կանաչ ժամ հայկական եկեղեցին, վերանորոգման քողի տակ



այն վերածվելու է ուղղափառ եկեղեցու, Արցախի պատմական միջավայրի պահ- պանության պետական ծառայությունն է այսպիսի ահազանգ տարածել: 44-օրյա պատերազմի ժամերից փրկված Կանաչ ժամը սկսեց ավերակի վերածվել, երբ Շուշին անցավ Արդեթանի հսկողության տակ, զանգակատան գմբեթից սկսեցին, հետո մտան ներս: Այս ամենը երեւում էր հենց արդեթանցիների տարածած լու- սանկարներում ու տեսանյութերում: «Հայտնվել են լուսանկարներ՝ պայթեց- ված վիճակում եկեղեցին, իսկ մենք գի- տենք, որ եկեղեցին ռազմական գործո- ղությունների ժամանակ չէր տուժել, բնա- կանաբար այն պայթեցվել էր Շուշին իրենց վերահսկողության տակ անցնե- լուց հետո: Անընդհատ ահազանգել ենք, անընդհատ դիմել ենք, նաեւ ԿԳՄՄ-ն դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին եւ ռուս խաղաղա- պահների, բայց ինչպես տեսնում ենք, Արդեթանն անարգել շարունակում է թե՛

վանդալիզմը եւ թե՛ մեր մշակութային արժեքների բռնալուծումը», - ասում է Արցախի պատմական միջավայրի պահ- պանության պետական ծառայության ղե- կավար Արմինե Հայրապետյանը:

Ըստ ՀՅԴ Բյուրոյի Հայ Դատի կենտրո- նական գրասենյակի՝ կոնգրեսական Սփիերին միացել են Կոնգրեսի հայկա- կան հարցերով խմբի համանախագահ Ֆրենկ Փալոնը, փոխնախագահ Ադամ Շիֆը եւ կոնգրեսական Աննա Էշուն:

Սփիերի նախաձեռնությունը հաջոր- դում է Ադամ Շիֆի եւ Կոնգրեսի հայկա- կան խմբի ղեկավարների կողմից շրջա- նառության մեջ դրված մեկ այլ՝ 1351 բա- նաձեւի նախագծին: Այն կոչ է անում ան- հապաղ դադարեցնել ԱՄՆ-ի օգնությու- նը Արդեթանին եւ դատապարտել արդ- րեթանական հարձակումը Հայաստանի եւ Արցախի դեմ: Բանաձեւի նախագիծը ներկայումս ունի 44 կոնգրեսականի ստո- րագրություն:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿՎՈՐ

ՆԵՐԻՈՒԺԵԼ ԵՆ ՀՂ ՏԱՐԱԾՔ

ՀՀ Ան քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպում է ունեցել ամերիկյան «Քար- նեգի» հիմնադրամում:

Արմեն Գրիգորյանը Վաշինգտոն աշ- խատանքային այցի շրջանակներում հանդիպել է ամերիկացի ներկա եւ նախ- կին պաշտոնյաների, դեսպանների, «Քարնեգի» հիմնադրամի եւ այլ վերու- ծական կենտրոնների անդամների հետ:

Հանդիպմանը Գրիգորյանը ներկայաց- րել է Արդեթանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ ձեռ- նարկած լայնածավալ ագրեսիան եւ դրա հետեւանքները՝ մատնանշելով, որ նման քայլով Բաքուն ներխուժել է ՀՀ ինքնիշ- խան տարածք եւ սպառնում է հայաստա- նյան ժողովրդավարությանը:

Ան քարտուղարն ընդգծել է Երեւանի հաստատակամությունը ժողովրդավարու- թյան ուղով ընթանալու հարցում:

Գրիգորյանը նաեւ անդրադարձել է Արդեթանի կողմից միջազգային հումա- նիտար իրավունքի կոպիտ խախտումնե- րին եւ քաղաքացիական բնակչության ու ենթակառուցվածքների թիրախավորման փաստերին:

ՆԱԽԱՐԱՐԸ ՀՅՈՒՐԸՆԿԱՎԵԼ Է

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը սեպտեմբերի 26-ին այցելել է Հայ Առաքե- լական եկեղեցու Մեծի Տանն Կիլիկիո Յրուսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի ազգային առաջնորդարան, հանդիպել ազգային, կենտրոնական ու թեմական վարչության անդամների, համահայկա- կան խորհրդի եւ հայ համայնքի ներկայա- ցուցիչների հետ:

Ինչպես հայտնում են Արցախի ԱԳՆ-ից, հանդիպման ընթացքում քննարկվել են Արցախի ներքին եւ արտաքին քաղաքա-

կանությանը, սոցիալ-տնտեսական իրա- վիճակին, արդեթանադարաբառյան հա- կամարտության կարգավորմանը, ներհայ- կական կապերի զարգացմանը, տարա- ծաշրջանային գործընթացներին առնչվող հարցեր:

ԶԵՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՐՑ

Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը հայտնում է. «1991 թվականից ի վեր առաջին ան- գամ ԱՄՆ քաղաքական գործիչները, Կոնգրեսում երկկուսակցական կոնսեն- սուսի ճնշման ներքո, քննարկում են Հա- յաստանին զենք վաճառելու հարցը՝ Արդ- րեթանի կողմից ագրեսիայից եւ էթնիկ գտումներից պաշտպանվելու համար՝ ընդգծելով, որ Արդեթանի աջակիցն այս հարցում թուրքիան է»,- նշված է հայտա- րարության մեջ:

ԶՈՐԱՅԱԿԱՔ ԶԿԱ

# ՉԵՆ ԿԱՐՈՂ ԳՆԱԼ ԱՌԱՋՆԱԳԻԾ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի 16-ին ԱԺ ամբիոնից հայտարարում էր, թե ռազմական դրության անհրաժեշտություն չի տեսնում, սակայն առաջնագիծ մեկնել ցանկացողներին կոչ էր անում կամավոր դիմել զինկոմիսարիատներ: «Մենք մտաբանում ենք բազմաթիվ ֆաղափարներից առաջարկներ ենք ստանում, մտաբանում ենք ֆաղափարներ, ու՛րբեք ասում են, որ ռազմական դրությանն էին ստիպում, որդեգրի մասնակցեն մեր երկրի ինֆրախառնության եւ սարածափայլի յուրաքանչյուրը: Անվստուծության խորհրդի միտում դա էլ ենք ֆինանսել եւ ելել ենք այն եզրակացության, որ եթե կան մարդիկ... հասցանք կան մարդիկ, ու՛րբեք ուզում են ներգրավված լինել այս փուլում, նրանք կարող են սովորական ընթացակարգով, կամավորության հիմքով դիմել զինվորական կոմիսարիատներ, եւ այդ խնդիրը կլուծվի», - ասել էր Փաշինյանը:



«Պարոն Պապիկյան, մինչև այսօր կամավորականներ են եղել, որոնք դիմել են զինկոմիսարիատներ, բայց զինվորական կամավորագրում չի եղել: Ինչո՞ւ, մենք կարող ենք չունենք կամավորների օգնություն:»

Մարտական գործողությունների ժամանակ անձնակազմի հավաքագրումը եւ նախորդումը համապատասխան ծառայության վայրեր իրականացվում է գործող օրենքի համաձայն եւ գործող օրենքի շրջանակներում:

Սեպտեմբերի 13-ին սկսված լայնածավալ պատերազմի ընթացքում ինչո՞ւ բանակում մոբիլիզացիա չկատարվեց այն դեպքում, երբ բանակում ունենք բազմաթիվ կորուստներ, եւ շատերը կամավոր կերպով ցանկանում էին իրենց կյանքը նվիրել հայրենիքին: Վարչապետ Փաշինյանն ամբողջով հայտարարում է՝ եթե չեք ուզում հանձնել հողերը, կարող եք գնալ եւ պաշտպանել: Այն մարդիկ, որոնք դիմել են, մինչև այսօր ինչո՞ւ նրանց չեք թույլատրում գնալ սահման:

Գործող օրենքի համաձայն՝ զորահավաք կազմակերպվում եւ իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում

ռազմական դրություն հայտարարելու դեպքում:

Շատ մարդիկ մոտեցել են զինկոմիսարիատ՝ թույլտվություն ստանալու սահման գնալու համար, բայց նրանց ի պատասխան ասվել է, որ կարող են բարձրանալ սահման, սակայն զենք չեն կարող նրանց տրամադրել: Դուք ինչպե՞ս եք մարդկանց ուղարկում սահման առանց զենքի:

Հայտարարությունը որտե՞ւ կերպ չի համապատասխանում իրականությանը, ուստի եւ անհիմն է, քանի որ առաջնագծում առանց զենքի զինծառայող չկա:

Այս պահի դրությամբ խնդրում եմ տրամադրել հստակ տվյալներ կամ քարտեզ՝ ինչպիսի դիրքային առավելություններ ունի հակառակորդ կողմը, ինչպիսի առավելություններ ու կորուստներ ունի հայկական կողմը: Ինչքան տարածքներ է օկուպացրել հարբեջանական կողմը հայկական տարածքներից:

Ներկա պահին ընթանում են ճշգրտման, համադրման եւ վերլուծության անհրաժեշտ աշխատանքներ, որի արդյունքներով կներկայացվեն համապատասխան տեղեկություններ:

Ջրուցեց ՔՍՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

## ՀԱՓՇՏԱԿԵԼ Է ԳՐԱՄԱՊԱՆԱԿԸ



Երեւան քաղաքի Լենինգրադյան փողոցում գտնվող շենքերից մեկի աստիճանահարթակում 2022 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 06:45-ի սահմաններում, Երեւան քաղաքի 30-ամյա բնակիչը ձեռքին գտնվող արցունքաբեր դեղորայքը փչել է 21-ամյա կնոջ դեմքին եւ հափշտակել դրամապանակը, որում եղել է 9.000 ԱՄՆ դոլար, 220.000 ՀՀ դրամ, բանկային քարտեր, անձը հաստատող փաստաթուղթ, 10.000 դազախական թենգե, եւ դիմել փախուստի: Ինչպես տեղեկանում ենք Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրությունից, 30-ամյա բնակիչը եղել է տվյալ կնոջ ծանոթը:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է արցունքաբեր սրվակ:

Ձեռնարկված անհետաձգելի միջոցառումների արդյունքում նույն օրը՝ ժամը 10:38-ին, 30-ամյա տղամարդը հայտնաբերվել է «Բագրատաշեն» անցակետում եւ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել:

Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է հափշտակված գումարը:

Նախաքննությունը շարունակվում է:

## ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱՏԱՐԵԼ

Սեպտեմբերի 25-ին ոստիկանություն էր գանգել Վայոց ձորի Վերնաշեն գյուղի մի բնակիչ եւ հայտնել, որ տնից գողացել են աշխատանքային գործիքներ:

Ոստիկանությունից հայտնում են, որ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողները պարզել են, որ հուլիսի 1-ից սեպտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում, օգտվելով առանձնատան նկուղային հարկի դուռը բաց լինելու հանգամանքից, գողացել են ընդհանուր մոտ 400 հազար դրամ արժողության աշխատանքային գործիքներ:

Գողության փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանության Եղեգնաձորի բաժնի ծառայողները ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզել են գողությունը կատարողի ինքնությունը: Վերնաշեն գյուղի 75-ամյա բնակիչը հրավիրվել է բաժնի եւ հայտնել է, որ գողությունն ինքն է արել, իսկ գողացված իրերը թաքցրել է ավտոտնակում: Նա ձերբակալվել է ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին: Գողոնը հայտնաբերվել է:

Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

## ԵՐԿՐՈՒ ԱՆՉ ՄՊԱՆՎԵՑ

Սեպտեմբերի 24-ին Մալաթիայում աղմկահարույց կրակոցների հետեւանքով սպանվեց երկու անձ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վիճաբանությունը եղել է աղջկա համար, որից հետո կողմերը չեն հասկացել միմյանց, եւ հնչել են կրակոցներ:

Սեպտեմբերի 24-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 21:00-ի սահմաններում ոստիկանության Մալաթիայի բաժնի ահազանգ է ստացվել, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Վանցյան փողոցում ոսկու շուկայի հետնամասում գտնվող պահեստային հատվածում, կրակոցներ են հնչել: Ոստիկանները դեպքի վայրում հայտնաբերել են տղամարդու դի, 1 հոգի էլ նշված վայրից տեղափոխվել է «Աստղիկ» բժշկական կենտրոն. նրա կյանքը փրկել չի հաջողվել: Ասել է թե՛ մեկ գիշերվա մեջ երկու անձ սպանվեց:

Փաստի առթիվ Մալաթիայի բաժնում սպանություն եւ սպանության փորձի հատկանիշներով նախաձեռնվել է քրեա-

կան վարույթ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում:

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

## ԲՈՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԳՐՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ պաշտոնատար անձի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու, ոստիկանի նկատմամբ բռնություն գործադրելու բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նշենք, որ դեպքի վերաբերյալ ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակցի կողմից համապատասխան զեկուցագիրը ներկայացվել է 2022 թվա-

կանի սեպտեմբերի 25-ին, համաձայն որի՝ նույն օրը՝ ժամը 22:10-ի սահմաններում, Երեւան քաղաքի Արմենակյան փողոցում ծառայություն իրականացնող ոստիկանության հիշյալ աշխատակցին մոտեցել է «Նիսասան» մակնիշի վտոմեքենայի վարորդը եւ հայտնել, որ լավ չի զգում խնդրելով իրեն տեղափոխել հիվանդանոց:

ՀՀ ոստիկանության աշխատակիցը նստելով հիշյալ ավտոմեքենան օգնություն խնդրած անձին եւ մեքենայում գտնվող ուղեւորին տեղափոխել է հիվանդանոց, այդ ընթացքում վերջինս առանց որեւէ պատճառի սկսել է հայիոյանքներ հնչեցնել ոստիկանության աշխատակցի հասցեին, քաջքշել նրան եւ հարվածել վերջինիս քթին՝ պատճառելով մարմնական վնասվածք:

Իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել է առերեսույթ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, որը Երեւան քաղաքի՝ 1975թ. ծնված բնակիչ է: Վերջինս ձերբակալվել է՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով: Նախաքննությունը շարունակվում է:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 26-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 50 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐ

Ավելի քան մեկ տարի է, ինչ հօջեանի գինու, կոնյակի գործարանի կողմից Արստե գետի հունում եւ ավին մեծածավալ անօրինական աշխատանքների, բետոնե հսկա պատ կառուցելու հետեանքով գետի հունը փոխվել, խորացել է, այլևս հօջեանի դենդրոպարկը Արստեից ոռոգման ջուր չի ստանում: Դրա հետեանքով հազվագյուտ, արժեքավոր ծառատեսակներով եւ թփերով հայտնի հօջեանի դենդրոպարկում ավելի քան 200 տեսակի ծառ եւ թուփ է չորացել: Անօրինական հրամանով աշխատանքից ազատված հօջեանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանն իրեն աշխատանքից ազատելու հրամանը չեղարկելու, աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի գումարը բռնագանձելու հայցով դիմել է Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան, դատարանը նրա օգտին որոշում է կայացրել, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը սահմանված ժամկետում չի բողոքարկել դատարանի այդ որոշումը, այն օրինական ուժի մեջ է մտել, Մ. Սայադյանը վերականգնելու է դենդրոպարկի տնօրենի պաշտոնում: Նա հայտնեց, որ իրեն այդքան էլ չի ուրախացնում պաշտոնում վերականգնվելը, այլ իրեն մտահոգում է այն, որ իր հոր՝ Լյուդվիգ Սայադյանի կողմից 60 տարի առաջ ստեղծված դենդրոպարկը հօջեանի գինու, կոնյակի գործարանի կատարած անօրինականության հետեանքով չորանում է: Նիկոլ Փաշինյանի վարչապետության օրոք նրա հայրենի քաղաք հօջեանի մարզարիտ համարվող դենդրոպարկը պետական պաշտոնյաների անխիտ որոշումների, հօջեանի գինու, կոնյակի գործարանի կողմից ապօրինությունների հետեանքով ոչնչացման եզրին է: հօջեանի գինու, կոնյակի գործարանի վերաբերյալ քրեական գործը ավելի քան մեկ տարի «քննվում են»:

ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից շատ երիտասարդներ հիմնական բնակության են տեղափոխվում Երեւան, այնտեղ բնակարան վարձակալում: Մայրաքաղաք տեղափոխվողների մեջ մեծ թիվ են կազմում են ժամկետային զինծառայությունը նոր ավարտածները: Երեւան տեղափոխվելու հիմնական պատճառը աշխատանք չունենալն է, իսկ Երեւանում ավելի հեշտ է գործ գտնելը: Մայրաքաղաք տեղափոխված երիտասարդները, որոնք ծրագրավորողի որակավորում ունեն, հեշտ են աշխատատեղ գտնում: Գյուղերից Երեւան տեղափոխվածներից միջին տարիքի տղամարդիկ հիմնականում աշխատում են տարբեր օբյեկտների շինարարությունում: Ընտանիքներով տեղափոխվելու դեպքում ավելի հեշտ է լինում հոգավ Երեւանում վերջերս շատ բարձրացած բնակվարձը: Երիտասարդների մայրաքաղաք տեղափոխվելը դոմինոյի էֆեկտով բացասական ազդեցություն է թողնում գյուղերի վիճակի վրա: Սահմանամերձ գյուղերում քիչ թվով հարսանիքներ են լինում, տարեցտարի պակասում է դպրոցների աշակերտների թիվը, գյուղական փոքր խանութներում առեւտրի շրջանառությունը նվազում է եւ այլն: **ՆՍԿԸՆ ՄԱՐԶԱՅԸ Տավուշ**

ԱՌԱՋԱՐԿԵԼ Է

1991 ԹՎԱԿԱՆՆԻ ՄԱՐՄԱՆՆԵՐԸ

Երեկ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ հանդիպման ժամանակ առաջարկել է Ադրբեջանի հետ խաղաղության համաձայնագրի համար հիմք ընդունել 1991 թվականին ստորագրված ԱՊՀ-ն կազմավորելու մասին համաձայնագրի սահմանները: Այս առնչությամբ ArmLur.am-ը գրուցել է գեոդեգիս-ֆրեսեգագիր Շահեն Շահինյանի հետ:



-Պարոն Շահինյան, 1991 թվականին ստորագրված ԱՊՀ-ն կազմավորելու մասին համաձայնագրի սահմանները եւ Նյու Յորքում վարչապետի ելույթի ժամանակ հնչած 29.800 կմ-ը նրա սահմաններն են ենթադրում:

-Ըստ էության, երկու հայտարարությունում էլ խոսք է գնում նույն սահմանների մասին, սակայն չկա հստակեցում, թե որ սահմանի մասին է գնում խոսքը: Սահմանները պետք է հստակ ինչ-որ իրավական փաստաթղթով լինեն, դա կարող է ոչ իմ-նավոր լինի, բայց փաստաթուղթ լինի: Չի կարելի հստակ ասել, թե որ քարտեզի մասին է խոսքը, սակայն այն հնչած գաղափարը, որ պետք է հիմք ընդունել 1991 թվականին գործող սահմանները, ապա այդ թվականին, քանի որ արդեն իսկ պատերազմ էր ընթանում, ապա այնտեղ արդեն իսկ սահմանային որոշ վերատեղակայումներ կային: Եվ պետք է հստակ հաշվի առնել, որ դա տարբերվելու է ցանկացած գոյություն ունեցող քարտեզից: Ես նախկինում էլ եմ նշել, որ առաջին հերթին սահմանազատման աշխատանքներում պետք է հստակեցվի, թե ինչ սկզբունքով են ընթանալու սահմանազատման աշխատանքները: Քանի դեռ այդ սկզբունքները հրապարակված չեն, չի կարելի խոսել պետության մասին:

-Այսինքն՝ հստակ չե՞ն այն սահմանները, որոնք եղել են 1991 թվականին եւ որոնք որպես հիմք են հայտարարվում:

-Միանշանակ, քանի որ 1991 թվականին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ոչ թե եղել է սահման, այլ եղել է ռազմաճակատ: Հայաստանի սահմանը, այսինքն՝ 29 743 քառակուսի կիլոմետրի մասին երբ գնում է խոսքը, 1970-ականների թվականի քարտեզներով սահմանված այն տարածքներն

են, որտեղ կան եւ՝ անկլավներ, եւ՝ կան Հայաստանի տարածքային Հանրապետության գիշած տարածքները: Այսինքն՝ սա այն վերջին թիվն է, որը ֆիքսվել է Սովետական Միության վերջին հրապարակված քարտեզներով: Իսկ վերջին հրապարակված քարտեզները եղել են 1980-1988թթ., դրանից հետո քարտեզի թարմացում Հայաստանի տարածքում չի արվել: Երբ խոսք է գնում այս մակերեսի մասին, ապա պետք է հասկանալ, որ այնտեղ կան անկլավներ:

-Սահմանազատման եւ սահմանագծման մասին խոսք գնաց, տարբեր տարեթվերի քարտեզների մասին խոսք գնաց. ո՞ր թվականի քարտեզն է ավելի ձեռնտու Հայաստանին:

-Հայաստանին միանշանակ ձեռնտու են այն քարտեզները, որոնք ավելի շատ տարածք են Հայաստանի համար նախատեսում, սակայն պետք է լինել ծավալապաշտ եւ փորձել ձեռք բերել ամեն ինչ: Մենք պետք է լինենք ռազմապետ եւ փորձենք խնդիր լուծել արդարացիորեն: Միգուցե իմ ասածը ծանր է հնչում, բայց անզան թշնամու հետ դու պետք է փորձես քո հարցը կարգավորել արդարացիորեն, որպեսզի այդ պայմանավորվածությունն ունենա դարերի կամ տասնամյակների կյանք: Այստեղ թյուր է այն ըմբռնումը, որ եթե Ադրբեջանի հետ մենք կարողանանք կնքել մաքսիմալ մեզ համար լավ պայմանագիր, դա երկար է լինելու: Այսինքն՝ այն պետք է լինի միանշանակ փոխզիջումային եւ ընդունելի երկու կողմերի համար: Երբ նայում ենք մենք հիմքերի տեսանկյունից, էլի պետք է վերադառնանք սկզբունքներին. եթե, օրինակ, մենք հիմք եք ընդունում այն տարածքները, որով մտել է ԽՍՀՄ տարածք, ապա կարող են հիմք ծառայել 1926

-1932 թթ. քարտեզները: Եթե հիմք ենք ընդունում վերջին վերահաստատված քարտեզները, ապա դրանք ավելի ուշ ժամանակների քարտեզներ են: Իսկ եթե գնում ենք դե ֆակտո զբաղեցված տարածքներով սահմանազատման, ապա խոսք է գնում 1970-ական քարտեզների մասին, սակայն վերջին ժամանակներս դրանից էլ պակաս տարածք է զբաղեցնում ՀՀ-ն:

-1991 թվականի սահմանները փոխզիջումային տարբերակ կարո՞ղ ենք դիտարկել, ի՞նչ սահմաններ է այն ենթադրում:

-1991 թվականի դե ֆակտո իրավիճակով անզան Ադրբեջանն այդ տարբերակին կարող է չհամաձայնել, քանի որ այնտեղ արդեն եղել էին մարտական գործողություններ, եւ հայկական կողմն ուներ ամուր դիրքեր: Դրանից հետո արդեն գոյություն ունի ՀՀ ներպետական մակարդակով ստեղծված քարտեզներ, շարք գոյություն ունի, այնտեղ, իհարկե, արտաքին սահմանների ճշգրտման աշխատանքներ չեն իրականացվել, սակայն կան թարմացված քարտեզներ: ՀՀ-ն, ըստ էության, փոխճանաչման պայմանագրեր հարեւան ոչ մի պետության հետ չունի: 1991 թվականի իրավիճակով եւ մինչեւ 2020 թվականի սեպտեմբերի 27-ի իրավիճակով սահմանները եղել են նույնը: Դրանից հետո իրականացվել են արդեն իսկ փոփոխություններ սահմանային իրավիճակի, եւ տեսանք, որ նոյեմբերի 9-ից հետո սահմանին իրականացված ռազմական գործողություններով ՀՀ տարածքն աստիճանաբար փոքրացվել է, եւ արդեն ունենք պաշտոնական թիվ, որ 40 քառակուսի կիլոմետրով փոքրացել է:

-Այսինքն՝ ստացվում է՝ Ադրբեջանը պետք է վերադառնա ելման դիրքեր:

-Ոչ միայն պետք է վերադառնան ելման դիրքեր, այլ նաեւ համաձայնեն այն սահմանային իրավիճակին, որը գոյություն ուներ 1991 թվականին փաստացի: Որքանով ես եմ հետեւում իրավիճակին, Ադրբեջանն անզան այս տարբերակին համաձայն չէ եւ ծավալապաշտական նկրտումներով համաձայն չէ: Իրենք չեն ճանաչում ՀՀ ոչ մի տարածք, եւ եթե իրենց ֆեյք քարտեզին նայենք, Հայաստանը պետք է լինի 10-12 հազար քառակուսի կիլոմետր տարածք, զբաղեցնի ներկայիս ՀՀ չորս մարզն ամբողջությամբ եւ երկու մարզը մասնակի: **Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀՆՆՆԻՍՅԱՆԸ**

ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵԸԸ՝ 51 ՄԼՆ 578 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

Համայնքների սննտական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ուղղված սուբվենցիոն ծրագրով կառավարություն-համայնք համագործակցության արդյունքում Լեւոնտա գյուղացի մեջ են մի ԵՊՀ օբյեկտների վերանորոգման եւ վերակառուցման առաջարկներ:

Շիրակի մարզպետարանից հայտնում են, որ մարզպետի հանձնարարությամբ ծրագրերի ընթացքին ծանոթանալու, աշխատանքներում թերացումներն ու ձգձգումները բացատրելու նպատակով մարզպետարանի ոլորտային պատասխանատուները այցելել են համայնք:

«Հերթական այցելության ընթացքում ոլորտային պատասխանատուները հետեւել են Աշոցք բնակավայրի պուրակի կառուցման աշխատանքներին: Կառավարության 45 տոկոս համաֆինանսավորման արդյունքում 2022-2023 թթ. կիրականացվի 127 մլն 607 հազար դրամի աշխատանք: Աշխատանքների առաջին փուլի

ընդհանուր արժեքը 42 մլն 420 հազար դրամ է: Շինաշխատանքներն իրականացնում է «Գունաշեն» ՍՊԸ-ն: Նախորդ այցելության ընթացքում արձանագրված թերացումները վերացվել են: Պատասխանատուները կապալառու կազմակերպությանը եւ համայնքի ներկայացուցիչներին տվել են հանձնարարություններ՝ հորդորելով բացառել բացթողումները:

Կառավարություն-համայնք համագործակցության արդյունքում Աշոցքի Սարազյուղ, Բավրա, Դազանջի բնակավայրերում էլ բնական գազի ներքին ցանցի կառուցման աշխատանքներ են իրականացվում: Ծրագրի ընդհանուր արժեքը 51 մլն 578 հազար դրամ է: Պետական ներդրման մասը 60 տոկոս է, համայնքը կներդնի գումարի 40 տոկոսը: Կապալառու կազմակերպությունները «Պապ եւ Դավիթ» եւ «Ռոստորգ» ՍՊԸ-ներն են»,- ասվում է հաղորդագրության մեջ: Ըստ արդյունքի՝ իրականացվում են նաեւ Աշոցք համայնքի Աշոցք, Սիգակետ, Բավրա, Տողամարգ, Գոգհովիտ, Արփենի, Մուսայելյան, Փոքր Սա-

րիար եւ Սալուտ բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգման եւ վերակառուցման աշխատանքները: Պատասխանատուները հետեւել են Աշոցք եւ Արփենի բնակավայրերի համայնքային կենտրոնների վերանորոգման աշխատանքներին: Ծրագրի նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 66 մլն 393 հազար դրամ, պետությունը տրամադրում է գումարի 50 տոկոսը: Աշոցք եւ Փոքր Սեպասար բնակավայրերում իրականացվում են նաեւ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ: Ծրագրի նախահաշվային ընդհանուր արժեքը կազմում է 64 մլն 379 հազար դրամ, որից պետության համամասնությունը կազմում է 50 տոկոսը:

Նշվում է, որ արձանագրված թերացումների վերացման մասով պատասխանատուները կապալառու կազմակերպությունների եւ համայնքների ներկայացուցիչներին տվել են հանձնարարություններ՝ հորդորելով բացթողումները վերացնել ամենատեղի ժամկետներում:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ԳԵՐԻՆԵՐԻ ՀԱՐՑ

44-օրյա պատերազմից հետո Հայաստանը Բաքվում պահվող ավելի քան 50 գերի ունի: Նրանցից 33-ը 44-օրյա պատերազմից հետո ու դրա մոտակա ժամանակահատվածում են գերեվարվել, 20-ը՝ սեպտեմբերի 13-ի Ադրբեյջանի իրականացրած հարձակման հետևանքով: Տվյալները Եվրոպական դատարանում հայ գերիների շահերի ներկայացուցիչ, փաստաբան Սիրանուշ Սահակյանն է ներկայացնում ավելացնելով, որ գերեվարման նոր դեպքերի մեծամասնությունը արդեն իսկ պաշտոնականացվել է: Մինչև այս պահը, ասում է Սահակյանը, 156 գերի է հայրենադարձվել, բայց սրանով հանդերձ կան մեծաթիվ գերիներ, որ դեռևս պահվում են Ադրբեյջանում: Փաստաբանի փոխանցմամբ՝ մինչև այս պահը որևէ նախադեպ չկա, երբ դատարանի առաջ ադրբեյջանցի բարձրաստիճան ռազմական կամ քաղաքական գործիչ կանգնի, իսկ մենք բոլորս գիտենք, որ, առանց նրանց իրամասնատարության կամ առնվազն թողնելու, այսպիսի մասշտաբային պատերազմական հանցագործություններ կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ չէին կարող ծրագրվել և իրականացվել: Իհարկե, մանրամասնում է Սիրանուշ Սահակյանը, չի նշանակում, որ այդպիսիք ապագայում չեն լինի, պարզապես անձին արդարադատության ներկայացնելը բավականին բարդ ընթացակարգ է, դրան նախորդող քրեական վարույթներ պետք է իրականացվեն:

ՍԵՎԱԿ ՎԱՐՈՂՈՍՅԱՆ

COVID-19-Ի ԹԻՎՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

COVID-19 կորոնավիրուսով վարակման գրանցված դեպքերի թիվն աշխարհում սեպտեմբերի 27-ի առավոտվա դրությամբ կազմել է 615 միլիոն 555 հազար 415: Վիրուսի տարածման սկզբից ի վեր COVID-19-ի հետ կապված հիվանդություններից մահացածների թիվը հասել է 6 միլիոն 538 հազար 310 մարդու: COVID-19-ով վարակման ավելի քան 30 միլիոն դեպք գրանցած երկրների թիվը մտնում են ԱՄՆ-ն, ՅՆԱ-ն, Ռուսաստանը, Բրազիլիան, Ֆրանսիան և Գերմանիան: Ախտահարվածների և ինֆեկցիայի հետևանքներից մահացածների թիվը համապատասխանաբար կազմել է ԱՄՆ-ում 96 միլիոն 116 հազար 204 և 1 մլն 0560 հազար 789, ՅՆԱ-ում 44 միլիոն 575 հազար 473 և 528 հազար 562, Ֆրանսիայում 35 միլիոն 381 հազար 526 և 156 հազար 6000, Բրազիլիայում 34 միլիոն 638 հազար 288 և 685 հազար 835, Գերմանիայում 33 միլիոն 041 հազար 332 և 1498 հազար 576 մարդ:

Worldometer պորտալի տվյալներով, որը մասնագիտանում է աշխարհի կարեւորագույն իրադարձությունների վիճակագրության բնագավառում, մոլորակի 1 միլիոն բնակչության հաշվով մահացության գործակիցը սեպտեմբերի 26-ի առավոտվա դրությամբ կազմել է 839.2: ԱՄՆ-ում 1 միլիոն բնակչի հաշվով մահացել է 3232, ՅՆԱ-ում 376, Բրազիլիայում 3185, Ֆրանսիայում 2363, Գերմանիայում 1783. հաղորդել է «Ինտերֆաքս»-ը:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Գումանյանի հրամանով հաստատվել է 0-6 տարեկան երեխաների կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների սրամադրման կարգը: Հրամանն ուժի մեջ է մտել 2022 թվականի սեպտեմբերի 15-ից:

Սահմանված է, որ 0-6 տարեկան երեխայի կրթության և զարգացման կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար հիմք է հանդիսանում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի (ԿՁԱՊԿ) գնահատումը, որն իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան: Գնահատումը նպատակ ունի սահմանելու՝

-երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանները՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և միջավայրային անհրաժեշտ հարմարեցումներ, -սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացված չափաքանակ տրամադրելու հիմքերը,

-մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տեղությունը: Գնահատումն իրականացվում է երեք մակարդակներում՝

-նախադպրոցական մակարդակի գնահատում՝ նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից (առկայության դեպքում),

-տարածքային մակարդակի գնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (ՏԱԿ) մասնագետների կողմից,

-հանրապետական մակարդակի գնահատում՝ բողոքարկված դեպքերի գնահատում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) մասնագետների կողմից:

Նախադպրոցական մակարդակում



Մանկավարժահոգեբանական (ՄՀ) ծառայությունները տրամադրվում են նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների ամփոփումից հետո կանխարգելիչ միջամտությունների պլանով, որը մշակվում է իրականացվում է նախադպրոցական ուսումնական հաստատության (ՆՈՒՀ) մանկավարժների կողմից մեկ կիսամյակի համար:

Մանկավարժահոգեբանական աջակցության կարիք ունեցող յուրաքանչյուր երեխային տրամադրվող ծառայությունների ժամանակահատվածը, տեղությունը, ծավալը, ծառայության տեսակը և տրամադրման գրաֆիկը մշակվում է նախադպրոցական մակարդակի գնահատման արդյունքների հիման վրա ՆՈՒՀ-ի և ՏԱԿ-ի աջակցության խմբի կողմից և հաստատվում է ՆՈՒՀ-ի տնօրենի կողմից:

Մանկավարժները և աջակցության խումբը, համագործակցելով երեխայի ծնողների հետ, իրականացնում են կանխարգելիչ միջամտությունների պլանով նախատեսված գործողությունները՝ աջակցելով երեխային նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներով սահմանված կրթական ծրագրերի բովանդակությունը հասակակիցների հետ զուգընթաց յուրացնելու գործընթացում:

Տարածքային մակարդակում ծառայությունները տրամադրվում են ՏԱԿ-ի կողմից այն երեխաներին, որոնք տվյալ մակարդակում սահմանված կարգով գնահատվել են ճանաչվել են որպես կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (ԿՁԱՊԿ) ունեցող: ՏԱԿ-ում ծառայությունների տրամադրումը երեխային իրականացվում է անվճար՝ ՏԱԿ-ի միջոցներով, ուսումնական պարապմունքներից հետո՝ ըստ նախատեսված տեղության, ծավալի և երեխայի անհատական ուսուցման ու զարգացման պլանում (ԱՌԳՊ) նշված ժամանակացույցի:

Մանկավարժահոգեբանական ծառայություն ստացող յուրաքանչյուր երեխայի համար կազմվում է անհատական գործի թղթապանակ, որը ներառում է երեխայի նախադպրոցական և/կամ տարածքային մակարդակների գնահատման արդյունքների արձանագրությունները, եզրակացությունները, ԿՁԱՊԿ-ի վերաբերյալ վկայագիրը, ԱՌԳՊ-ը, երեխային տրամադրվող ՄՀ ծառայությունների ժամանակացույցը, երեխայի զարգացման վերաբերյալ հավաքագրված և արձանագրված ցանկացած տեղեկատվություն և դրա հետ կապված այլ նյութեր (լուսանկար, տեսանյութեր, երեխայի աշխատանքներ և այլն):

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ

ԲՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԵԼ Է 2.855.162 ԳՐԱՄԻ ՎՆԱՄ

ՀՀ բնադահողանոցային և ընդերքի շեշտակյա մարմինը ներկայացրել է 2022 թվականի սեպտեմբերի 12-ից 23-ն ընկած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Տեսչական մարմնի իրականացրած վերահսկողության ընթացքում արձանագրվել է 37 դեպք, որից 18 դեպքով հաշվարկվել է 5.302.860 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, 6 դեպքով նշանակվել 900.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Նախկինում արձանագրված 3 դեպքով հաշվարկվել է 106.300 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, 15 դեպքով նշանակվել 1.450.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Բուսական աշխարհի պահպանության ոլորտ

Արձանագրվել է 19 դեպք, որից 18-ով հաշվարկվել է 5.302.860 ՀՀ դրամի չափով

շրջակա միջավայրին հասցված վնաս, 1-ով նշանակվել 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Նախկինում արձանագրված 3 դեպքով հաշվարկվել է 106.300 ՀՀ դրամի չափով շրջակա միջավայրին հասցված վնաս, 3-ով նշանակվել 300.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Մթնոլորտային օդի և ջրերի պահպանության, թափոնների տեղաբաշխման, հողերի օգտագործման և պահպանման ոլորտ:

Արձանագրվել է 13 դեպք, որից 5-ով նշանակվել է 800.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Նախկինում արձանագրված 3 դեպքով նշանակվել է 400.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Հաշվետվությունների սահմանված ժամկետում չներկայացնելու 3 դեպք է արձանագրվել:

Նախկինում արձանագրված 8 դեպքով նշանակվել է 650.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Պետական փորձաքննություններ՝ արձանագրվել է 2 դեպք:

Նախկինում արձանագրված 1 դեպքով նշանակվել է 100.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

ՀՀ ԱՆ ՀԿԱԾ է ուղարկվել 2 գործ (ընդհանուր՝ 100.000 ՀՀ դրամ):

Նշված ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 871.000 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ԲԸՏՄ ղեկավարի կողմից տրվել է ստուգում իրականացնելու մասին 4 հանձնարարագիր, որից՝ 2-ը ներքոգտագործում, 1-արտադրություն, 1-ջրօգտագործում:

Նախկինում իրականացված 13 ստուգման արդյունքներով կազմվել է վարչական տուգանքի 23 որոշում՝ 2.170.000 ՀՀ դրամի չափով, նաև հաշվարկվել բնության պատճառված վնաս՝ 2.855.162 ՀՀ դրամի չափով: Տրվել է խախտումները վերացնելու մասին 6 հանձնարարական:

«Հոդվորդ» օրաթերթում և ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՈԳԵՅԱՆԳԱՏՅԱՆ ԿԱՐԳ

«ԿՈՄԻՏԱՍ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Սեպտեմբերի 26-ին մեկնարկել է Կոմիտասի քանդարան-ինստիտուտի ամենամյա «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատոնը, որն ավանդաբար անցկացվում է սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 8-ը (Կոմիտաս Վարդապետի ծննդյան օրերը՝ հին եւ նոր տարներով):

ԿԳՄՍ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ Կոմիտաս Վարդապետի 153-ամյակի առթիվ Հայր Աստղիկ արքեպիսկոպոստը հոգեհանգստյան կարգ է մատուցել Կոմիտասի անվան պանթեոնում, որի ընթացքում հոգեւոր երգասացություններ է կատարել «Գեղարդ» երգեցիկ խումբը: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի աշխատակազմը, մշակութային գործիչներ եւ արվեստասերներ ծաղիկներ են խոնարհել Վարդապետի շիրմին: Այնուհետև հնչեցվել է թանգարանի զանգը:

Իրավիճակով պայմանավորված՝ այս տարի «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատոնի մասշտաբային միջոցառումները չեղարկվել են: Գիտաժողովը կանցկացվի առավել զուսպ, կամերային ձևաչափով:

Գիտաժողով-փառատոնի շրջանակում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

հոկտեմբերի 3-ին՝ ժամը 19:00-ին, տեղի կունենա կամերային երաժշտության համերգ՝ տարանո Աննա Սամուիլի եւ դաշնակահար Մաթիաս Սամուիլի (Գերմանիա) մասնակցությամբ, Կոմիտաս թանգարան-ինստիտուտի դահլիճում: Ծրագրում Կոմիտաս Վարդապետի եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:



Հոկտեմբերի 6-ին՝ ժամը 19:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կինչի Տիգրան Մանսուրյանի «Արվեստ քերթության» ստեղծագործությունը (խոսք՝ Ե. Չարենցի)՝ Հայաստանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Ռոբերտ Մլքեյան):  
Հոկտեմբերի 7-ին՝ ժամը 09:30-16:30, եւ հոկտեմբերի 8-ին՝ ժամը 10:00-15:30, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում կանցկացվի «Կոմիտաս» միջազգային գիտաժողովը, որին կմասնակցեն գիտնականներ Հայաստանի եւ արտերկրի (Իտալիա, Ուկրաինա, ԱՄՆ, Կանադա) առաջատար գիտական հաստատություններից:  
Հոկտեմբերի 8-ին Հառիճի վանական համալիրում կինչի Կոմիտասի «Պատարագը»՝ Երեւանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Քրիստինա Ոսկանյան):

ԼԻՂԱ ԵՐԻՎԱՆՔԱՆՍ

ԼՈՒՐԵՐ

ՄԱՐԱԹՈՆՅԱՆ ՎԱԶՔ

Բրազիլիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ, 40-ամյա Կական մասնակցել է Բեռլինի մարաթոնյան վազքին: Նա ցույց է տվել 3:38.06 ժամ արդյունք:

«Տնցող Բեռլին: Հրաշալի մթնոլորտ 42 կմ-ի ամբողջ ընթացքում: Շատ հպարտ եմ, որ դարձա այս միջոցառման մասնակիցը: Շնորհակալ եմ բոլոր վազորդներին, երկրպագուներին, գործընկերներին», - գրել է Կական:

Կական ֆուտբոլիստի կարիերան ավարտել է 2017թ. դեկտեմբերին: Նա մասնակցել է 529 հանդիպման, խփել 161 գոլ, կատարել 146 գոլային փոխանցում:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԶՎԵՐԹԸ

Wizz Air ավիաընկերությունը սույն թվականի սեպտեմբերի 26-ից մեկնարկել է Հռոմ-Երեւան-Հռոմ երթուղով չվերթերը:

«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ից հայտնում են, որ չվերթերը կիրականացվեն շաբաթական երկու չվերթ հաճախականությամբ՝ յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ:

ՊՍԺ-Ն ԶԵՌՔ ԿԵԵՐԻ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ն հունվարին դարձյալ կփորձի ձեռք բերել Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» կենտրոնական պաշտպան Միլան Ծկրիկյարին:

«Ինտերն» ու 27-ամյա ֆուտբոլիստը չեն կարողանում համաձայնության հասնել պայմանագրի երկարաձգման հարցում: Այն նախատեսված է մինչեւ 2023թ. հունիս:

Ամռանը ՊՍԺ-ն փորձել էր իրականացնել Սլովակիայի հավաքականի ֆուտբոլիստի տրանսֆերը, սակայն իտալական ակումբը պահանջել է 80 միլիոն եվրո: Փարիզյան ակումբը պատրաստ էր վճարել 60 միլիոն եվրո:

Եթե Ծկրիկյարն ու «Միլանը» չէր կարողանա պայմանագիր, ՊՍԺ-ն ձմռանը կկարողանա 30 միլիոն եվրոյով գնել ֆուտբոլիստի տրանսֆերը:

Ծկրիկյարը «Ինտեր» է տեղափոխվել 2017-ին «Սամպորիայից»: Իտալիայի անցած առաջնությունում նա մասնակցել է 35 հանդիպման, խփել 3 գոլ:

6 ԱՆԸՆԴՄԵՋ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ֆուտբոլի Անգլիայի հավաքականը վատագույան շարքն է գրանցել 29 տարում:

Գարեթ Սաութգեյթի գլխավորած թիմն արդեն 6 հանդիպում անընդմեջ հաղթանակ չի տարել: Ազգերի լիգայի վերջին տուրում անգլիացիները 3:3 հաշվով ոչ-ոքի ավարտեցին հանդիպումը Գերմանիայի թիմի հետ: Անգլիայի հավաքականը դուրս մնաց Ա լիգայից:

Նոյեմբեր-դեկտեմբերին Զբաթում անցկացվելիք աշխարհի առաջնությունում Անգլիայի հավաքականի մրցակիցները խմբում կլինեն Իրանի, Ուելսի եւ ԱՄՆ-ի թիմերը:

ԹԵՄԱՏԻԿ ՆԻՍ

ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մեխիկայի մայրաքաղաք Մեխիկոյում 2022թ. սեպտեմբերի 28-30-ը տեղի է ունենալու ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ֆաղափականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովը (MONDIACULT 2022):

Ինչպես հայտնում են ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, համաժողովին մասնակցելու նպատակով Մեքսիկայի Միացյալ Նահանգներ է մեկնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի գլխավորած պատվիրակությունը:

Վահրամ Դումանյանը զեկույցով հանդես է գալու «Ժառանգությունը եւ մշակութային բազմազանությունը ճգնաժամի ժամանակ» թեմատիկ նիստում: Նախատեսված են նաեւ հանդիպումներ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավարության եւ օտարերկրյա պետությունների մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ քննարկելու մշակույթի եւ կրթության ոլորտներում, ըստ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների, փոխհամագործակցության ծրագրային ուղղությունները, իրագործման ընթացքն ու հետագա քայլերը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային քաղաքականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովի (MONDIACULT 2022) շրջանակում նախատեսվում է անցկացնել նաեւ տարբեր ժողովուրդների տարազների եւ մշակութային տարրերի



ցուցահանդես: Միջոցառման նպատակն է ներկայացնել MONDIACULT 2022-ին մասնակից երկրների մշակութային բազմազանությունն ու հարստությունը՝ տվյալ մշակույթներին բնորոշ գործվածքեղենի, ձեռագործ աշխատանքի, գեղարվեստի առարկաների ցուցադրմամբ:  
Հայաստանյան պատվիրակության կազմում են նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը եւ մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը: Համաժողովին մասնակցությունը հայ մշակույթն արտերկրում հանրահռչակելու եւ տարածելու հավելյալ հնարավորություն է, որը կարող է խթանել օտարերկրյա պետությունների հետ մշակութային կապերի զարգացումը, ինչպես նաեւ սերտացնել համագործակցությունը Մեքսիկայի գործընկեր կազմակերպությունների հետ՝ ձեռք բերելով նոր պայմանավորվածություններ եւ մշակելով համատեղ ծրագրեր:  
ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային քաղաքականության եւ կայուն զարգացման համաշխարհային համաժողովի (MONDIACULT 2022) ընթացքում կընդունվի հռչակագիր:

● Սեպտեմբերի 28-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմիտեի պետական թատրոնում տեղի կունենա «Սեանս հոգեթերապեւտի մոտ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ**

**ՀԱՐՑ. Ե՞րբ է աշխատող կրում նյութական դաստիարակություն:**  
*Հերմինե Գալստյան (41 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է՝

- 1) գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով,
- 2) նյութերի գերաճախա թույլ տալու հետևանքով,
- 3) աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս այլ անձանց պատճառված վնասը գործատուի կողմից հատուցելու դեպքերում,
- 4) գործատուին պատկանող գույքը փչացնելու պատճառով կատարված ծախսերից,
- 5) նյութական արժեքների ոչ պատշաճ պահպանության հետևանքով,
- 6) անորակ արտադրանքի թողարկումը կանխելու համար դիտավորյալ կերպով միջոցառումներ չձեռնարկելու, նյութական կամ դրամական արժեքները հափշտակելու հետևանքով:

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում աշխատանքներում չեն կարող ներգրավվել մինչև տասնութ տարեկան անձինք:

**ԻՐԱՎԱԿԱՆ**

**ՀԱՐՑ. ԵՏՄ անդամ դեռություններից ներմուծված ապրանքների մասով հարկ վճարողը իր հաշվառման վայրի հարկային մարմին ի՞նչ փաստաթղթեր դեֆ է ներկայացնի:**  
*Պավլիկ Պետրոսյան (52 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով հարկ վճարողը պարտավոր է իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել ներմուծողի լրացրած ներմուծման հարկային հայտարարագիրը ու ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ թղթային կրիչով (չորս օրինակից) եւ էլեկտրոնային տարբերակով, կամ ապրանքների ներմուծման եւ անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ էլեկտրոնային տարբերակով, հարկ վճարողի էլեկտրոնային (թվային) ստորագրությամբ:

**ՀՀ պետական եկամուտների կոմիտե**

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարները ՀՀ պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

**ԼՈՒՐ ԿԱԴՐ**

Լուսանկարն արվել է Ջերմուկում



Ահա թե ինչ տեսք ունի Ջերմուկ քաղաքը սեպտեմբերի 13-ի՝ Ադրբեջանի հարձակումից հետո:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
 Բաժանորդագրվելու  
 համար կարող եք դիմել



**«Հայմամուլ» ՓԲԸ**  
 հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**  
 հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**  
 հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
 Ազգանուն՝ \_\_\_\_\_  
 Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը.  
 «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝  
 «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23  
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086  
 տրված է 24.11.2010  
 Ստորագրված է տպագրության 27.09.2022

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: